Եւ մեք նախապէս գրեցաք առ ձեզ վասն ոմանց իրաց հարկաւորաց. և է այս, զի խնդրիցես ի յաբբայ հօրէն փոխանակ մեր, եթէ կարելի է, վասն եղբարց մերոց կրօնաւորաց, զի միասցուք ընդ ինքեան։ Քանզի գոհանամք զաստուծոյ բարձրելոյն, այժմ եղեալ է մեծ վանք ի լերինն լիբանանու, և ունիմք զբաւական ապրուստ. սակայն ոչ գոյ առ մեզ ոք, որ գիտասցէ կառավարել զհոգևոր իրակութիւնս, որ պատկանի առ պահպանութիւն կրօնի. և ոչ գոյ առ մեզ կանոն, եթէ ոչ Մարոնի կրօնաւորացն լիբանանացւոց, և յայսմանէ ևս ի բաց ձգեալ եմք զմանս իրս։ Բայց քանզի պիտոյ է մեզ զի պահիցեմք զարարողութիւնս և զկացութիւնս մեր, թէև իցեմք ի լերին, վասն զի բազումք ի քահանայից մերոց միշտ շրջին ի քաղաքս և ի գաւառս հայոց յառաքելութիւն, վասն այսորիկ պարտ է մեզ զի պահիցեմք զարարողութիւնս մեր։ Ուստի ես գրեցի քեզ վասն իրիս այսորիկ երկու անգամ, զի խնդրիցես ի յաբբայէն, եթէ կարելի իցէ, կամք իւր տալ մեզ զի ներկայացուցանիցեմք նմա զերկուս քահանայս ի մէնջ, և ուխտիցեմք նմա զսուրբ ուխտս, և կեայցեմք ի պահպանութեան կանոնին, որ հաստատեալ է. և օգնականութեամբ աբբային ընթանայցեմք յառաջ յամենայն իրս, մանաւանդ ի հոգևորաց։ Չի գոն առ մեզ այժմ աւելի քան զքսան եղբայր նորընծայ. կացեալք են և են ընդունակք ուսման, և սիրեն զայն, եթէ աբբայն առաքիցէ առ մեզ զքահանայ մի, կամ զերկուս, առ ի խրատել զմեզ, և ուսուցանել մեզ զոր ինչ պիտոյ է առ պահպանութիւն կանոնի։ Քանզի եղբարքն որ գտանին ի մենաստանի, միամիտք են, և մանաւանդ ի ժամանակէն յորմէ հետէ էջ գնաց տէրն մեր Աբրահամ վարդապետն յաթոռ իւր. ոչ մնաց մեզ գլուխ։ Ուստի եթէ ջանայցես յայսմիկ իրի, և առաքիցես մեզ զբժշկարար պատասխանի ի կողմանէ Աբբային, առնես զմեծ բարի. միայն տայցէ մեզ զկամեցողութիւն իւր՝ զի ներկայացուցանիցեմք ինքեան զերկուս քահանայս. կամ զքահանայ և զաբեղայ մի, որպէս զի կարգադրիցիմք ի նմանէ, և միանայցեմք ընդ նմա։ Եւ զո՞վ ոք ի յիւրոց կրօնաւորաց վարդապետաց տեսցէ, արասցէ ի վերայ մեր մեծաւոր ի վանս մեր, որ է վ.անք փրկչին աշխարհի։ Եւ եթէ կատարեսցի այս, եղիցի ձեզ վարձ և հատուցումն յաստուծոյ. և եղիցիք շահեալ զմեզ և փրկեալ զանձինս մեր ի յամենայն որոգայթէ։ Քանզի յիրաւի ո՛վ եղբայր իմ, ունիմք ի յայս վ.անս իւրաքանչիւր որն զքսան ամ, որն աւելի, և որ նուազ. և ո՛չ գիտեմք, թէ յորո՛յ իրի վերայ եմք։ Միայն ուխտեմք զմեծ ուխտ վ.արդապետին՝ յեկեղեցւոջ. և բաց յայսմանէ զայլ ինչ ո՛չ գիտեմք։ Եւ այս է պատճէն ուխտին մերոյ որ արդ հասանի առ ձեզ. ներկայացուցէք զնա աբբային, և տեսանիցէք թէ զինչ է բան նորա։ Եւ եթէ ոչ եղիցի մեզ ճար ի կողմանէ ձերմէ, առանց կարծեաց իւրաքանչիւր ոք ի մէնջ երթայ յայլ կրօն։ Ոմանք առ կրօնս հռոմոց, ոմանք առ հայոց, ոմանք առ Ֆռանկաց, և ոմանք առ Մարոնաց։ Բայց մեք քահանայքս որք եմք առաջակայք, բաղձանք մեր է միանալ ընդ կանոնաւ հայոց և ազգի մերոյ. զի լիցի բարին ազգին մերում, և ձեզ միջնորդական անուն՝ զի հոգացիք զմէնջ։ Եւ եթէ Մխիթար աբբայն դիցէ զձեռն իւր ի վերայ մեր, ոչ լինի նմա ծախել ինչ ի մարմնաւոր գոյից. բայց միայն ի հոգևորաց. և լինի ընդ հնազանդութեամբ նորա. և ինքն լինի ընդհանրական մեծաւոր մեր, և ոչ ոք ի մէնջ հակառակի նմա յիրի իմիք. և որ հակառակ կացցէ և ոչ ընդունեսցի զդատիլն իւր ի նմանէ, իսկոյն ի բաց ընկենումք զնա ի մէնջ։ Եւ արդ մեք ակն ունիմք ի ձէնջ՝ թէ առաքիցէք մեզ զբժշկական պատասխանի վասն այսորիկ։ Եւ մի մոռանայք զմեզ յաղօթից. Տէրն մեր երկարեսցէ զկեանս ձեր, և տացէ ձեզ զարքայութիւնն երկնից, որք հրաժարեալք էք յաշխարհէ վասն նորա։ Եւ ընծայեսջիք ի մէնջ զհամբոյր ձեռաց Մխիթար աբբային, և ասասջիք նմա, թէ մեք եմք որս մեծ, և է ի սմա փրկութիւն անձանց. ուստի մի՛ զանց արասցէ զմեօք. մինչ ինքն է հայ յազգէ մերմէ, պարտաւորեցեալ է առաւել զմէնջ, քան թէ զայլոց։ Եւ մատո ի մէնջ զբազում ողջոյն մնացեալ հարցն մերոց քահանայից, և եղբարց պատուելեաց. նաև եղբօր քում Աւետիսին։

Յեգիպտոս

Յամի տեառն 1740

ի յուլիսի 25

Եղբայր ձեր

Նիկողայոս վարդապետ [Գրիգորեան]